

ՀՈՒՄԱՆԻԶՄԸ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԽԱՂԵՐՈՒՄ

Խ. Ս. ՍԱՐԴՍՅԱՆ

Գիտությանն վաստակավոր գործիչ

Սայաթնովագիտության հիմնադիրները հանճարեղ բանաստեղծին հենց սկզբից դիտել են նրա ամբողջականության մեջ, որպես հորինող ու մարդ, սիրահար ու հասարակության անդամ։ Դ. Ախվերդյանը պարմանում էր Սայաթնովայի «մտաց ճարտարության» վրա և ասում, որ նա, «սիրու ղերության մեջ տարփանքով վառված», միաժամանակ «հոգևոր լժիշկ» էր, «բարոյական դուրդար»¹։ Հ. Թումանյանը, անվանելով նրան «հոյակապ սիրահար», ասում է, որ նա «աշխարհքի ու մարդու մեծ բարեկամն» էր և անցավ «իր ժողովրդի լավն ու ցավը պատմելով»²։ Վ. Բրյուսովի կարծիքով նա միայն ուրախացնող չէ խրախճանում, «այլև ուսուցիչ է, մարդարև»³։

Եվ իսկապես։ Սայաթնովան սիրու մեծ երգիչ էր, նրա հայացքը թափանցում էր հեռուններ, իսկ մարդու հոգեկան աշխարհի մեջ խորանալու նրա կարողությունը, կարելի է ասել, անսահման էր։ Սայաթնովան մեծ քնարերգու էր և որպես այդպիսին նաև մեծ մտածող։ Նա ոչ միայն ապրում էր, սիրում և տառապում, այլև արծվի իր հայացքով դիտում շորս կողմը, խորհում, հետևություններ անում։ Նրա խաղերի մի զգալի մասը մտորում է, մտածմունք կյանքի մասին, առհասարակ աշխարհի մասին։ Դրանք «խոհական» չեն բառիս տրագիցիոն իմաստով, ինչպես անվանվում են միջնադարյան տաղերգուների որոշ տեսակի բանաստեղծությունները։ Դրանք ընդհանուր ու վերացական խոհեր չեն աշխարհի ունայնության, կյանքի անցողիկության և այլնի մասին. այլ կոնկրետ փորձից, անմիջական իրականությունից ելնող մեծ ընդհանրացումներ, որոնց մեջ հայտարարվում են բանաստեղծի վերաբերմունքը ղևալի կյանքի հոռի կողմերը, իրականության նրա գնահատականները, նրա բնագիտման անարդարության այլևայլ արտահայտությունների ղևա։ Այդ խաղերի մի զգալի մասը վերածված է երգի, դրանք բանաստեղծի գլուխ-գործոցներից են թե՛ որպես պոետական արվեստի բարձր արտահայտություններ և թե՛ որպես երաժշտություն։

1.

Սիրելով և տառապելով ու միաժամանակ առավել ուշադրությամբ դիտելով աշխարհը, Սայաթնովան տեսնում է, որ իր և իր նմանների ցավերի սկիզբը, նրանց ակունքները իր շրջապատում են գտնվում, գալիս են մարդկան-

¹ «Սայաթնովա», Թիֆլիս, 1914, էջ 8, 9, 10, 11։

² Հ. Թումանյան, Սայաթնովա, Երևան, 1945, էջ 12, 54։

³ «Поэзия Армении», Москва, 1916, էջ 59։

ցից, այն օրենքներից, որոնցով նրանք ղեկավարվում են, այն կարգերից, որոնք սահմանվել են կյանքում: Դառը սխրությունը պատում է բանաստեղծին: Ու եթե անպատասխան սերը արցունք է քամում նրա աչքերից, ապա կյանքում տիրող անիրավությունից առաջացած դժգոհությունը կրժում է նրա սիրտը: Բանաստեղծը կոնֆլիկտի մեջ է իրականության հետ: «Աշխարհս՝ մե փանջարս է...» խաղի վերջում Սայաթ-Նովան աւում է.

Երբուկի պես կեղուր գու լամ՝ վարքիս խաբեն շատացիլ է,
Զի՛ն բողնում վախտին բացվելու,— Բաղերումեն լեզաբիլ իմ...⁴

Սա նշանակում է, որ հանդամանքները, կյանքում տիրող օրենքները, դուլություն ունեցող հարաբերությունները հնարավորություն չեն տալիս մարդկանց բացահայտվելու, իրենց իզձևը կատարելու, մուրադին հասնելու: Զգացմունքների փթիթման համար ասպարեզ չկա, նվիրականը մնում է խոր թաղված: Մարդ վարդի պես պիտի բացվի, բայց խոչընդոտներն այնքան են շատ, որ այդ տեղի չի ունենում՝ կա՛մ կոկոնն են կտրում, կա՛մ թառամած են քեզ տեսնում: Բանաստեղծը հոգնել է անժամանակ քաղվելուց՝ Բաղերումեն: Խհարկե, ասածու համար հեշտ է մարդուն աշխարհ բերելն ու տանելը: Բա ինքնաբերաբար կատարվող մի գործ է: Բայց

Ո՛վ ետե քե յիս կու ապրիմ առուտեմեն ինչու մուարե...

Առավոտվա փոխարինումն էլ երեկոյով բնական երևույթ է: Բայց կարո՞ղ ես տեսլ, թե աշխարհի բացման հետ միասին իմ հոգին էլ բացվում է, ապրում, թե արևի ծագման ու մայր մտնելու արանքում ես կարողանում եմ նորից ու նորից հիանալ աշխարհով, կամ՝ նորանոր, առավել զեղեցիկ դժեռ տեսնելով նրա մեջ՝ միաժամանակ ամեն մի բույս չեմ խոցվում ու նսեմացվում: Սայաթ-Նովայի հարցադրման մեջ արդեն առկա է ժխտական սլառասխտներ: Նրա ասածն այն է, որ մարդ լիարյուն չի ապրում և չի էլ կարող ապրել, որովհետև ինչպես շատացել էր վարդն ուտող միջատը, այնպես էլ շատացել էր խալխի սուտը, դուրի համար ճանապարհը կտրվել էր: Շատացել են իր, Սայաթ-Նովայի դարերը, կյանքի դժվարությունները՝ վաբերը՝ այնքան են բազմացել, որ բանաստեղծն այլևս մարդուց սպասելիք չունի. ոչ թրթուրն արբեշում կտա, ոչ էլ սև ճանձր՝ մեղր, հարամը հայալ չի դառնա: Հարկավոր է ստուգել մարդուն, կոյր քոն փորձաքարին, այն ժամանակ կորոշվի նրա լավն ու վատը, որովհետև արտաքուստ մարդ կարող է բարեհամբույր լինել, խալխ թվալ, իսկ ներքուստ չալը դուրս գալ. «Գուցիմ սիրտրտ շանց տաս, տեսրտ ամեն մարթ հա՛ կու տեսնե»,—ասում է Սայաթ Նովան: Աշխարհս այնքան էր վատացել, որ կենսուրախ բանաստեղծը երկու տողում երկու անգամ միևնույն բառերով ունայնության մասին է խոսում՝ աշխարհս միզ սրնալու չէ: Մեջլիս սիրող աշույն այլևս չի կարողանում տանել խալխի գափը, համբերությունը հատել է. նրան բարկացնում է անգամ մարդկանց ուրախանալու հավասր.

Հում կարնակիւր—Արա՛մի գաբ, հա՛լար քլի կա Բու բափին...

⁴ «Սայաթ-Նովա», հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեա Մ. Ս. Հասրաթյան, Երևան, 1959, էջ 70 (հ): Խաղերի լեզուն ցույց է տրվելու (հ), (վ) և (ա) տառերով՝ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն:

⁵ «Սայաթ-Նովա», «Ասեցին, թե Շախաթա յի...», էջ 143 (ա):

Սոցյալ-Նովայի հիասթափությունը կյանքից այնքան է խոր, հոգնածությունը՝ այնքան համատարած, որ ամբողջ խաղի զլխավոր մոտիվը դառնում է հուշակավոր բեզարիլ իմ խոսքը: Բանաստեղծը բեղարել է Բաղևումեն, թշնամիներին՝ Բաղևումեն, բեղարել է մեծատուններից՝ աղևումեն, բեղարել է անգամ զալիք օրից:

Էբեզ լավ էր կանգ վրա էստ,—վաղերումեն բեզարիլ իմ...

Կյանքը անընդհատ դեպի վատն է գնում, չարչարանքն օրավոր խտանում, տառապանքը՝ խորանում,— «օրը մեկ է, ցավը՝ հազար»⁶,— ու Սոցյալ-Նովան այնպիսի մի հայտարարություն է անում, որից կտրելի է միայն փշաբայովել:

Մար բամաշա մեկ չի քի,— Բաղևումեն բեզարիլ իմ...

Որքան աշխարհից վշտացած պիտի լինեիր բանաստեղծը, որպեսզի հայտարարեիր, թե ո՞վ է ասել, որ մարդ միշտ միեմույնը պիտի լինի. ահա տեսե՛ք, երեկ լի էի ավյունով, այսօր դատարկ մի անոթ եմ ես, ոչնչություն: Որքան տրորված պիտի լինեիր կյանքից, որպեսզի ինքը փակեր իր բերանը, լուցներ իր երգը, կտրեր իր խաղի թելը: Մեծ ուրբերություն նա պիտի ապրեր, չբաժարվելով ինքն իրենից, իր էությունից, իր հանձարից՝ Բաղևումեն: Խաղի սկզբի տուգերում, որ, ամփոփում լինելով, թվում է, վերջում պիտի լինեին Սոցյալ-Նովան ասում է.

Աշխարհս մի փանջառա է,— քաղերումեն բեզարիլ իմ.

Մրտիկ տոփոտն ետ խոցվի,— ռաղերումեն բեզարիլ իմ...

Աշխարհը, որ ներշնչման աղբյուր էր, այժմ ոչինչ չի ասում Սոցյալ-Նովային, համը է, անխոս: Նա կծկվել, փոքրացել, փանջառա է դարձել: Նա բանտ է՝ նեղ, սրտաձմիկ պատուհաններով, կաղեմատ՝ հեռանկար փակող քաղերով: Ահա թե ինչ եղրահանգման հասցրեց Սոցյալ-Նովային կյանքի անարդարացի տնօրինումը:

Սոցյալ-Նովայի հոգնածությունը մարդկանցից և աշխարհից, անձնական ապրումների խոր կնիք կրելով, ըստ էության հայ ժողովրդի, ուշ Փետրաբուրգյան շրջանի շահագործման խորացման պայմաններում ապրող հասարակ մարդու վշտի, նրա ծանր ճակատագրի արտահայտությունն է: Այդ վիշտը ծորալով փոքրիկ, թերեւս անտեսանելի ատվակներով, ծովացել է բանաստեղծի հոգում ու վերջիվերջո վերածվել չբնադ այս երգին:

2

Սոցյալ-Նովայի հոգնածությունը, նրա հիասթափությունը, իրականության նրա հոռի գնահատականը, անդրադառնալով մի շարք խաղերում («Էրկու գիդի

⁶ Նույն տեղում:

⁷ Սոցյալ-Նովայի մասին առաջին սուս գրողը՝ Յա. Պոլսնսկին հետևյալ նուրբ գիտողությամբ է անում. «Նրա շատ երգերում առանձին տների միջև ոչ մի տեսանելի կապ չկա: Բայց դրա դիմաց նրա երգի տոներ երբեք չի փոխվում. որպես գերակշռող զգացմունքի արտահայտություն՝ այն սկզբից մինչև վերջը մնում է նույնը: Այդ տոներ նրա յուրաքանչյուր բանաստեղծությանը միասնություն է հաղորդում ու հարկադրում ակամայից սուղվել նրա սրտի խորքը, այն տեղ որոնելու կարծես պատահաբար արտահայտած մտքերի սերբին կապը» («Кавказ», 1851. № 2):

միշտիցումը...», «էնդուր կուլամ...», «Բեզարիլ է հոքիս մարմնից...»⁸ և այլն), նորից, շատ հետաքրքիր կերպով, բացասալուծում են «էշխի ծովի միշեն հանած...»⁹ խաղում:

Շ. Ռումանյանի «Իմ երգը» բանաստեղծությունը¹⁰, որը արտահայտում է պոետի աշխարհըմբռնման ուղն ու ծուծը, իր ոգով շատ մոտ է Սայաթ-Նովայի խաղին: Ճիշտ է, երկու բանաստեղծների ապրում զարաշրջանը և պատմական փորձը տարբեր են, բայց քանի որ շատ կողմերով են նրանք մերձենում իրար, այսու դուզահեռ անցկացնելը նրանց զործերի միջև միանգամայն արդարացիվում է: Սերտ աղերս կար երկու մեծ բանաստեղծների միջև: Լայն էր նրանց հոգին, ընդգրկուն, նրանք սիրում էին աշխարհը, մեծապես զնահատում կյանքը, համակիր էին մարդու թե՛ բերրի անքնին և թե՛ տառապանքին:

Սայաթ-Նովայի խաղը հետևյալ երկտողով է սկսվում.

էշխի ծովի միշեն հանած յալ ու զոհար է բիւրս.

Սիւտակ, կանանչ, խաւ ու դումաշ, գաւ դալամբաւ է բիւրս...

«Իմ երգի» սկիզբը.

Գանձեր ունեմ անտակ, անծիր...

Այս տողերն անգամ բավական են ակնարկելու երկու բանաստեղծությունների ներքին աղերսը: Խոսելով իր անտակ և անծայր գանձերի մասին, Ռումանյանը, իհարկե, նկատի ունի հոգևոր գանձերը: Նույնը կարելի է ասել Սայաթ-Նովայի վերաբերյալ: Այդ է վկայում Սայաթ-Նովայի խոսքը, թե լալ ու դոհարի, խաւ ու դումաշի իր բնոր նա հանել է էշխի, աշսինքն սիրո, ապրումների ծովից:

Այդ է վկայում նաև «Բուլիմ» ումբրրա հենց անց կացնիմ...» խաղը¹¹: Այստեղ Սայաթ-Նովան ասում է, թե անհունորեն հարուստ է: Նա բեռներով ատլաս ունի, ունի մազադաթի պես գար-չալամքառ, նա ունեցան է հարուստ, որ կարող է գնել ամբողջ Չինումաշին: Միամիտները կարծում են, թե Սայաթ-Նովան զանգին է: Այո՛, Սայաթ-Նովան իսկապես զանգին է, հարուստ է, անչափ հարուստ: Բայց նրա հարստությունը ոչ թանկարժեք քարերն են ու կերպասները և ոչ էլ հոտավետ բույսերն ու համեմունքները: Նրա հարստությունը երգն է:

Չին գիդի բե ուշկ ու միտկրս հագաւ մե բաբաբ հանգին ա...

Սայաթ-Նովան, զարգացնելով նախորդ խաղում իր ասածը, շարունակում է, թե իր բնոր հիլ ու մեխակ է, դոշար ու շարլաթ, նուշ ու նարաթ, թե նրա հոտը աշխարհ է բռնել, թե

Բեշեան ուստաղ կա աշխարում, բուղ հավաքվին բամաշի.

Հրեդրստանից դալամբաւ գա, մաթ կու մրես իմ նախշին:

Մար կու մրեան իմ մաւշանին, իմ ակենբուն աննաշիվ...

⁸ «Սայաթ-Նովա», էջ 118 (վ), 195 (ա), 186 (ա):

⁹ Նույն տեղում, էջ 133 (ա):

¹⁰ Շ. Ռումանյան, Գեղարվեստական երկեր, 1934, էջ 101:

¹¹ «Սայաթ-Նովա», էջ 27 (հ):

Իր հոգևոր գանձերի մեծությունն ու փայլը առավել տպավորիչ դարձնելու համար օգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, բոլոր թանկարժեք քարերը, արևելյան ամեն տեսակի կերպասները, Սայաթ-Նովան իր ասածն ավարտում է հետևյալ տողով.

Բիրս Լեֆան մինձադիլ է՝ փիլր տանիլ չի կանա...

Այսպիսով, Սայաթ-Նովայի հոգևոր բևուռ, անընդհատ մեծանալով ու ճանրանալով՝ հասնում է անհուն չափերի, որ նա արտահայտում է այն ժամանակվա արևելյան մարդու համար հնարավոր հիպերբոլայով: Կարծես արձագանքելով Սայաթ-Նովային, Թումանյանն ասում է.

Սա հարուստ եմ, չա՛ն ես հարուստ,
Մով բարություն, շրճո՞ւմ ու սեւ
Տոխ պարզե եմ առել վերուստ...

Պարզ է, որ թե՛ Սայաթ-Նովան և թե՛ Թումանյանը հոգեպես լեփեցուն են դգում իրենց, անչափելիորեն հարուստ: Ու երկուսի մոտ էլ ներքին այդ հարստության գիտակցությունը ուղեկցվում է անհուն երջանկության ապրումով: Մավալելով իր իսադի բովանդակությունը, Սայաթ-Նովան ասում է.

Սելավ էլ գա, սրտիս բուրեն էլի մաւիլ չի կանա...

Բայց դա լրիվ համապատասխանում է Թումանյանի բանաստեղծության հետևյալ տողերին.

Անհուն հանք իմ գանձերի
Սիրտըս է առատ, լեն ու ազատ՝
Ինչե՛մ էլ որ բաշխեմ ձրի—
Սերն անվերջ է, բարին՝ անհատ...

Եթե մեկի սրտի բոցը չի կարող մարել ոչ մի սելավ, ապա մյուսը որքան էլ շռայլի իր գանձերը՝ չեն հատնի, որովհետև անսպառ են նրա մեջ ամբարված սերն ու բարին: Երկու մեծ բանաստեղծների հոգու լիությունը նորից ու ավելի ուժեղ է շեշտվում, նորից ու ավելի ուժեղ զգացվում է նրանց երջանկությունը. նրանք երջանիկ են մարդկանցով, ամբողջ աշխարհով, իրենց հանձարով:

Սայաթ-Նովան ասում է.

Է՛յ, աղանիւ, վախում իմ յիս բալանչեմեն ու գողես՝
Բիրս մե մեկ բաց իմ անում, շահց իմ տալիս էկողին,
Իմ գրլուխս մատաղ րլի տոնողին ու չառնողին...

Թումանյանն ասում է.

Երկուդ չունեմ, ան չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհով մին՝ անա էսպես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից...

Թվում է, թե մեկը վախենում է զողից, մյուսը ոչ: Սակայն նրանց ասածներն ըստ էության նույնն են: Որովհետև Թումանյանի խոսքը, թե իր դանձերն աշխարհով մեկ շաղ է տալիս, նույնն է, ինչ Սալաթ-Նովայի խոսքը, թե իր բոլոր բաց է անում, ցույց է տալիս ամենքին, թե նա մատաղ է լինում առնողին էլ, չառնողին էլ, այսինքն՝ բոլոր մարդկանց անխտիր: Նրկուսն էլ գիտակցում են իրենց անհուն հարստությունը, երկուսն էլ պատրաստ են այն մինչև վերջին կաթիր հանձնել մարդկանց: Սակայն Սալաթ-Նովայի խաղում կան մոմենտներ, որոնք բացակայում են Թումանյանի մոտ: Նրանց միջև սկսվում է տարամիտում, որը ելնում է երկու մեծ բանաստեղծների պատմական տարբեր ճակատադրից: Թումանյանը հեռանկար էր տեսնում, նոր կյանքի արեածաղ, Սալաթ-Նովայի համար հորիզոնը շարունակում էր ամպամած լինել:

Թումանյանի բանաստեղծությունն այսպես է ամփոփվում.

Ես հաբուսա եմ. ես բախտավոր
Իմ ծրերնդյան պալժառ օրեմ.
Էլ աշխարհ չեմ գալու ես նոր,
Ի՞նչ տրվածն եմ տալիս իրեն...

Ահա Սալաթ-Նովայի խաղի վերջին տունը.

Փեռ քարերն ալմաս դառնան. աչկրս վրեն չի մրսա.
Թե մարքիք իմ տխրն չը գան՝ ուրիշի մոդ չիմ գրեա.
Հետի էշի կրակ ունիմ. ինձ մոլեկալ չին կանա.
Սալաթ-Նովուն չը հավատաք, չուն իսկրհ էս մեկրն ա.
Զրլի բե առնուն դրնիք. կու հալվե՞՞ ձյուն է բիրս...

Թումանյանը նորից ու նորից հաստատում է բանաստեղծության նախորդ տողերում իր ասածը, թե ինքը հարուստ է, բախտավոր, երջանիկ, և այդ ոչ միայն հիմա, այլ ի սկզբանե, իր ծննդյան օրից, որը նա նույնպես երջանիկ է համարում, պալժառ: Միաժամանակ նա հաստատում է նաև իր միաձույլ լինելը աշխարհի հետ, այն ներդաշնակությունը, յուրատեսակ այն շրջանառությունը, որը կա նրա և աշխարհի միջև. բանաստեղծը ասացել է, այժմ վերադարձնում է:

Սալաթ-Նովան էլ նորից հաստատում է իր հաղեցած լինելը հոգևոր քանձերով: Բանաստեղծն այնքան է լցված, որ ժեռ քարերը, թեկուզ և արմատադառնային, չէին հարուցի նրա նախաձեռն, նա այնքան ունի, այնքան է անչափելի նրա ունեցածը, որ հեռավոր կերպով անգամ կարիք չի զգում ուրիշից վերցնելու: Սալաթ-Նովան շարունակում է անհունորեն հարուստ լինել: Բայց երևում է, որ նա այլևս երջանակություն չի զգում, որ նա կորցրել է հոգեկան իր հավասարակշռությունը, ներդաշնակությունը:

Հենց մեջ բերած տողերում Սալաթ-Նովան ասում է, որ բռնված էշի կրակով, իրեն մոտենալ անհնարին է, իսկ նախորդ տողերից մեկում ուղղակի նախազգուշացնում է, ասածու սիրուն խնդրում, որ չմոտենան իրեն, որովհետև մոտեցողին իր բոլոր կվառի: Այս տողերից էլ ասաջ Սալաթ-Նովան միևնույն խաղում ասել է.

Օշով ռանգրն չի հասկանա՝ ուրիշ քանաք է բիրս.
Աշկ ունեցող չրաեսնողին ահ ու զահաք է բիրս...

Հիմա պարզ է, թե ինչու Մայաթ-Նովան խորհուրդ չի տալիս մոտենալ իրեն. նրա բևեռն ուրիշ ուանգ, գույն ունի, ուրիշ թաճար է, ուրիշ տեսակի: Ուրիշ րախար... Մա հիշեցնում է բանաստեղծի «Դուն էն գլխեն իմաստուն իս... խաղի»¹² հայտնի խոսքը, թե իր ջուրը ուրիշ ջրեն է, իր գիրը ուրիշ գրեն: Ու ինչպես աշնտեղ նա ասում էր, որ ամեն մարդ չի կանա խմել իր ջրից, չի կանա կարդալ իր գիրը, այդպես էլ հիմա նա ասում է, որ մարդիկ չին կանա մոտենալ իր բեռին: Առաջին դեպքում Մայաթ-Նովան, գիտակցելով իր արվեստի և արվեստագետի իր մեծությունը, զննելով է թագավորի հետ, արհամարհում նախագ, վատ մարդկանց, կտրվում աշխարհից. նույնը կատարվում է նաև հիմա: Բանաստեղծը գիտակցում է, որ իր ռադգր, գույնը մարդիկ չեն հասկանում, որ ֆիզիկական աչք ունեցողները չոգու աչք չունեն, որ տեսնեն իրեն: Այնքան մոտ լինելով մարդկանց՝ նա ստիպված է հեռանալ մարդկանցից, օտարանալ նրանց, զգուշացնել իրենից, մեկուսանալ: Նա այնքան է անհասկանալի դառնում, որ իր անսահմանորեն զոլված ու քաղցր բեր հոգով կույր մարդկանց թվում է զանախ՝ լեզի: Ի՞նչ անել, որ զնալ: Խաղի վերջին երկուսը պատասխանում է այդ հարցին:

Մայաթ-Նովուն չը հավատախ, չուն իսկըն էս մեկըն ա.

Ջրի բե աբեուն դրեիք. կու հալվե՛ս օրուն ի բիոբս...

Սուտ է ամեն ինչ, հանկարծակի ու զայրացած ասում է Մայաթ-Նովան, ծայրահեղ ոգևորությունից թեքվելով ծայրահեղ հուսահատության կողմը, ոչինչ չկա իմ մեջ, ոչ էշխ, ոչ կրակ, ոչ դանձ: Չհավատաք իմ ասածներին, իմ սրտի քուրան վաղուց մարել է: Սխալ իսկո, միակ ճշմարտությունը այն է, որ բեռն արևի դեմ զնելուց կհալվի, կանխանա, որովհետև այն ավելին է, քան սովորական ձյունը:

Ծայրահեղ անբավարարվածությունից ու զժգոհությունից ելնող հուսահատության արտահայտություն են Մայաթ-Նովայի այս խոսքերը: Կարծես ցասման պահին հիասթափված բանաստեղծը պատուհում է իր զգովարը և տրորում ոտքերի տակ, ինքնասպանություն գործում:

Մայաթ-Նովան ստիպված է թաքցնել իր մեծ բովանդակությունը, կորցնել նրա հետքերը: «Աշխարհս՝ մե փանջարա է...» բանաստեղծության մեջ նա արդեն հրաժարվել էր իր խաղերից. «խաղերումն բեզարի իմ»: Բայց դա բնականորեն հոգնածության սոսկ մասնակի արտահայտություն էր: Այժմ այդ հրաժարումը համատարած բնույթ է կրում, այժմ Մայաթ-Նովան հրաժարվում է իր էությունից մինչև վերջը, իսպառ: Ու այն ստեղծագործությունը, որ մի ժամանակ բնութագրվում էր որպես անխորտակ ժայռ՝ «Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկրեն է», այժմ հավասարեցվում է փխրուն զանգվածի՝ ձյան:

Բանաստեղծի տրագիկոմը նորից և ուժեղ բացահայտվեց: Անհունորեն մեծ էր նրա հումանիստական գիտակցության և տիրող վայրագ, մարդու սպառնալու պատվությունն ամեն րոպե արորող հասարակարգի միջև եղած հակասությունը: Դրա հետևանքով է, որ կեցության խանդավառ ընդունումը ավարտվեց վրձնական հրաժարումով ամենից, ընդհուպ իրենից: Բայց այդ հրաժարումը, ազնիվ այդ վրդովմունքը նաև մի ապտակ էր իշխողներին:

¹² «Մայաթ-Նովա», էջ 20 (հ):

3

Հասարակության հետ ունեցած կոնֆլիկտից առաջացած ողբերգությունն իր մեջ է առնում բանաստեղծի սիրո ողբերգությունը: Բայց ինչպես ամենատեղեւոր պայմաններում անգամ Սայաթ-Նովայի հոգում շարունակում է հաճել սիրածի լուսայիր պատկերը և բանաստեղծը մնում է անդավաճան, այնպես էլ անդավաճան է մնում նա դաժանորեն տրորվելով հոռի կարգերից, և լավի ու բարու հավատը մնում է աներեր: Իր խորիմաստ թախիժով կյանքի է «Աշխարհս մե փանջարա է...» խաղը: Բայց նրա մթամած երկնակամարի վրա անգամ փայլատակում է լույսի շողը. «Գուզիմ թըռչի բըլբուլի պես...»: Այս մի քանի բառը միանգամից մեղմացնում են ամբողջ խաղի մոայլությունը: Սա կապարե ճնշման տակ գտնվող ազնիվ հոգու պոռթկում է՝ սփռվելու, ազատ շունչ քաշելու: Ինքն թուժանյանն է այս խոսքի կապակցությամբ ասել, թե Սայաթ-Նովան «... տանջվելով ու վշտանալով հանդերձ և տանջանքից ու վրշտից բեկարելով հանդերձ՝ միշտ էլ մնում է նույն բարին, քնքույշն ու ազնիվը»¹³:

Այսպիսով, բոլոր դեպքերում էլ Սայաթ-Նովայի հոգու խորքում շարունակում է պլպլալ վառ մի ճրագ: Կյանքում, այո՛, տիրողը սուտն է, բանաստեղծը խորապես զգում է այդ, բայց շարունակում է անհողողող հավատալ ճշմարտությանը. «Կրրակ էլ տաս ճըշմարիտին մահ չը կա»,—ասում է նա: Ճշմարիտը նույն է, որ ջրհեղեղից անգամ ահ չունի¹⁴:

Աշխարհում արդարություն, աղալաք չկա, դատաստան չկա,— պնդում է բանաստեղծը,— բայց ոչ միայն չի ենթարկվում, այլ, ընդհակառակը, հակադրվում է այդ անիրավությանը և ասում, որ նման պարագայում անգամ աշուղի լեզուն բլրու է, նա չի անիծում, նա միայն օրհնում է¹⁵: Սայաթ-Նովան մնում է լավատես, մարդկային:

Բանաստեղծն էլիսից հիվանդացել է, հարաջ կանչելու հնարավորություն չունի, լողման հեքիմն էլ կենդանի չէ, որ նրա ցավին դարման անի. նա շփոթվել է, նրա դալամն այլևս չի գրում, նա մահամերձի պես է, բայց և այնպես՝

Միտեկուս համա չիմ հոգում, գիլի համա իմ լալի¹⁶...

Ինչպես էլ ըմբռնենք ցիլ բառը, ազդ թե սերունդ, աբս տողում նորից օրհնանք է լսվում: Մահը չի կծկում Սայաթ-Նովային, նա շարունակում է լինել լայնասիրտ և մեծահոգի, հանրության շահը շարունակում է գերակշռող լինել: «Փանջարա»-ում Սայաթ-Նովան ասել է. «Վաղիրումեն բեկարիլ իմ»: Բայց դրանից մի տարի առաջ (1758) գրած խաղում¹⁷, նա ասել է.

Միտածին օղումի տալով սաղիւիս իմ ման գալի...

Անցած օրն չիմ ափսոսում, վաղիւիս իմ ման գալի...

Թո՛ղ մեռելները թաղեն մեռելներին: Մտահոգվենք կենդանի մարդկանց ճակատադրով, մտածենք նրանց վաղվա մասին, ապագայի մասին: Բլբուլի

13 Հ. Թ ու մ ա ն յ ա ն, Սայաթ-Նովա, էջ 15:

14 «Սայաթ-Նովա» «Աթաբեքի, անդաճ արա էս բանիս...», էջ 174 (ա):

15 Նույն տեղում, «Էնդուր աչկրս չէ ցամաքում...», էջ 49 (հ):

16 Նույն տեղում, «Էշխմետ հիվանդացիլ իմ...», էջ 52 (հ):

17 Նույն տեղում, «Մահըս իրա վստով դու քա...», էջ 183 (ա):

պես թուչելու մաղթանքը կարծես մարմնավորվում է այս թոփշի մեջ՝ դեպի դաշիքը, այս որոնումների մեջ՝ դռնելու կենդանի, իսկական մարդուն. «Մարդի համա ախ իմ քաշում, նամարդից իմ լեղարի», — ասում է Սայաթ-Նովան «Բեղարիլ է հոքիս մարմնից...» հայտնի խաղում: Սայաթ-Նովան նորից ելնում է մեր առջև իր ամբողջ վեհությունը և նորից ու նորից հաստատում, որ ինչ էլ ուղում է լինի, ինչ էլ բարկության պահին ասի աշխարհի մասին, իր մասին, իր սերը նորից կյանքն է, մարդը:

Ողբերգությունը մնում է, բայց մարդկայնությունը չի կորչում, այլ, բնականապես, առավել շեշտվում է:

4.

Սայաթ-Նովայի անձնավորության և սակզծագործության համար բնորոշ է, որ նրա առաջին խաղերից մեկը՝ «Աստղալուսով...»-ը¹⁸, ուղղված է հենց պնդականության դեմ, որի ներկայացուցիչներից մեկը, հպարտանալով իր ծագումով, վիրավորել էր բանաստեղծին:

Աստղալուսով ծովըն ինչպես կու ցամփի.
Մաղով Քրոի չուրըն ինչպես կու շափվի.
Ուրեմ գուգե Բամին փըշլ մինն ուժով.
Ժեռ Բաբեմեն յիֆ կանա մե բան տանի...

Արտաքին աշխարհից ելնելով, նրա գանազան երևույթները հակադրելով իրար ըստ արժեքի և ուժի, — աստղալուսի թուլությունը և ծովի ջրերի անսահմանությունը, մաղի փոքրությունը և Քուի անեղր մեծությունը և այլն, — Սայաթ-Նովան իր սուր ասացվածքների տարափով բառիս բուն իմաստով կարկտահար է անում հակառակորդին. դու քեզ շատ վեր համարիր, բայց դղումին թարեքի վերևում տեղ տալով նա Շիրապի շուշա չի դառնա: Որքան կամենում ես հարուստ հագնվիր, բայց դու կլինես կրկած պղինձ և ոչ թե արծաթ:

«Աստղալուսով...»-ի ասացվածքներին հարակցող արտահայտությունները առատորեն սփռված են Սայաթ-Նովայի խաղերում: Ամեն անգամ, երբ դիպչում են զգայուն բանաստեղծի ինքնասիրությանը, նրանք, այդ ասացվածքները, երևան են դալիս, և յուրաքանչյուր անգամ՝ նոր ձևով ու տեսքով: Պալատում ինչ-որ խոսք է առաջացել Սայաթ-Նովայի այնտեղ մնալու մասին ու բանաստեղծն ասում է.

Կավե չամրն վունց կուլի մե բանգ չինի.
Ամեն ծառ էլ կրկն չի տա դաշինի...¹⁹

Մի դեպքի կապակցությամբ Սայաթ-Նովան արդարության է հորդորում թաղավորին և ասում.

Ակոավը բլրուլ չի դառնա. Բանի գուգե, վուր ափս անե...²⁰

Իր վերջին խաղի մեջ²¹, գրված 1760-ական թվականների սկզբին, Հաղրատում, Սայաթ-Նովան, հիշելով աշխարհիկ կյանքն ու բարձր դասելով այն, թախծով ասում է.

¹⁸ Նույն տեղում, էջ 115 (վ):

¹⁹ Նույն տեղում, «Ով հարենին...», էջ 120 (վ):

²⁰ Նույն տեղում, «Թաքավուր իս, դիվանս արա...», էջ 71 (հ):

²¹ Նույն տեղում, «Իմ խիղճ գրուխ...», էջ 129 (վ):

Քրիստոս իմ, զարի դառնալն ինչի՞ս էր,
 Յիս աղավնի, նուր լուր դառնալն ինչի՞ս էր.
 Ա՛սե՛մ, կրօնավոր դառնալն ինչի՞ս էր...

Այս ասացվածքներով Սալյաթ-Նովան վարպետությունը արտահայտում է իր մտքերը, իր վերաբերմունքը դեպի կյանքի երևույթները: Մի տեղ, օրինակ, ինքը բանաստեղծը, նման ասացվածք բերելով, գրում է. «Էս սուած է, յիս ինձնից չիմ՝ հնարի»²²:

Արժեքների ոլորտը թեակոխող այս ասացվածքները վերջ ի վերջո բոլորվում են ֆեոդալական իրավակարգի մի հիմնական հարցի շուրջը. որքա՞ն ճշմարիտ է, որքա՞ն արդարացի է գնահատել մարդկանց ըստ նրանց արտաքին տվյալների, ըստ նրանց ծագումի և ոչ թե ըստ ներքին տվյալների, ըստ բովանդակության: Ուշն ու միտքը կենտրոնացնելով մարդու ճակատագրի վրա, Սալյաթ-Նովան շարունակում է դիտել աշխարհը, նրան իմաստավորող առարկաներն ու էակները, դասավորում նրանց ու տեսակավորում՝ բանալի գտնելու, լուծելու համար իրեն զբաղեցնող խնդիրները: Այդ ամենը նա անում է ոչ միայն իր զուգալի հմայքը պատկերելու, այլև իր միտքը պարզելու համար: «Ինձ ավատա...» խաղը²³ ավարտվում է հետևյալ քառատողով.

Մաք կա կոսե՝ ագնիվ ցիլի գաւմն իմ լիս.
 Ուտենիւ էլ կոսե, մաքի ծառն իմ յիս.
 Վրաջ րաբավուրի սագաղաւն իմ յիս,
 Ինձ Սալյաթ-Նովա-Արուրի՛նն ա, կոսիւն:

Մի պարծենալու այն բանով, որ աղնիվ ծագումն ունիս, — ասում է Սալյաթ-Նովան: Ուտենին էլ ասում է, թե ինքը մարխի ծառն է. բայց ի՞նչ է դրանով ավելանում նրան, քանի որ մարխի ծառի աղնիվ հատկությունը նա շարունակում է շուրջնալ: Ջորին էլ ասում է՝ իմ դեղեն ձին է²⁴, բայց դրանով նա ձի չդարձավ: Մարդու արժեքը սրտշրջը ծագումը չէ, առհասարակ որևէ մի արտաքին, իրենից դուրս գտնվող հանգամանքը չէ, այլ նրա մեջ եղածը, նրա գործը, նրա արածը: Աշխարհումս ամեն ինչ կամ գունևովրն էր՝ Ծաւնչեան, կամ՝ փոքոլով²⁵. այսինքն առարկաներն ու էակներն իմացվում են այն բանով, թե ինչպես են արտահայտվում, ինչպես են դրսևորվում: Դրանից ելնելով է, որ բանաստեղծը, հակադրվելով աղնիական ծագումով պարծեցողին, ասում է, թե ես Սալյաթ-Նովան եմ, Արուրի՛նն եմ, այսինքն ինձ ճանաչում և արժեքավորում են ոչ թե իմ ծագումով, այլ ինձնով, իմ երգ ու նվագով, իմ սուղ ու քյամանչայով, — ու դա է, որ լցնում է նրան ներքին հպարտանքով, դա է, որ դարձնում է նրան անխոցելի: Այդպիսով, ծագման վրա հիմնված ֆեոդալական կարգերի սոցիալական հիերարխիային բանաստեղծը հակադրում է իր հիերարխիան, որը հիմնված է մարդու շնորհի, սեփական արժանապատվության վրա: Արժեքները տեղաշարժվում են, առաջ են գալիս նոր՝ գնահատականներ, նոր վերաբերմունք երևույթների նկատմամբ: Մարդը սկսում է դիտվել սրբաբան հատակալանությամբ:

²² Նույն տեղում, «Ով հարենին...», էջ 120 (վ):

²³ Նույն տեղում, «Ինձ ավատա...», էջ 126 (վ):

²⁴ Նույն տեղում, «Մբտա էջիս բուրեն...», էջ 66 (հ):

²⁵ Նույն տեղում, «Ինձ ավատա...», էջ 126 (վ):

5

Սայաթ-Նովան ասում էր, որ ինքը վրաց թագավորի սպանդարն է։ Արքունիքում նա բարձր էր զնահատվում։ Բնական է, որ պալատից հեռացնելը նրան վիշտ պատճառեց։ Բ՛նչ եղավ քեզ, ասում է բանաստեղծը խորտակված հոգով, ի՞նչ արին քեզ հետ, չէ՞ որ դու պատվական էիր ու գոված, չէ՞ որ քեզ սակի արկղում էին պահում։

Թափափուրաց կամփով մեջիս կանչվողիս,
Թավաղներուց միօրվող ու հաղվողիս.
Կամփի կապան աբբ ու փառփով հաֆնողիս.
Արիդայի սիվ բուրբը լաժին կլավ...²⁶

Հանկարծակիի եկած բանաստեղծը իր այլևայլ խաղերում հորդորում է թագավորին, որ իրեն դուրս չանի, արյունը թասերով չվիթի, այլ պահ-պահ պանի առյուծով ու խասով, որովհետեւ «թանկ առած իմ քու ահագին ծախսերով»²⁷, որովհետեւ Սայաթ-Նովայի պես «դուր գուն կինքումըս չիս ճարի»²⁸։ Սակայն, աղերսանքով էլ դիմելով թագավորին, ասելով, որ թեկուզ «չանքս փետով վեր հատին» ես ինձ քեզից բաժանողը չեմ, հայտարարելով, որ դրա համար ինքը պատրաստ է Քուռն ընկնել, իսկ Քուռն չխեղդվելու դեպքում ծովում խորտակվել, Սայաթ-Նովան, այնուամենայնիվ, չի դաժնաձանում իրեն, ունման գեղումներին, որ կրում են գերազանցորեն բնկերական-բարեկամական բնույթ. որոշ կետի հասնելով, վերջ է տալիս։

Պալատում ամբաստանվելուց հետո, մեկն ուսաց Սայաթ-Նովային. «... դրնա, մաշված շուր իս գուն», մյուսը՝ «... մե հոտած ջրհուր իս գուն», երրորդը՝ «... մե անպատիվ հուր իս գուն», իսկ երբ բանաստեղծը դուրված-դարդարված, «սաղը քոքած» զնաց թագավորի մոտ, նրան հետ տվին, ասելով «...դրնա, էրեսրտ սիվ մուր իս գուն...»։

Նման արհամարհական, ոչնչացնող վերաբերմունքի բացատրությունը Սայաթ-Նովան տալիս է հենց նույն «Արթար դատե, չէ՞ վուր թաքավուր իս գուն...»²⁹ հանդիմանական խաղում։ Նա ասում է.

Յիս ոամիկ իմ, ինձի վոյսչ-վոլիչ քաղեցի՜...

Ամբողջ հարցը, ուրեմն, ուամկության մեջ էր, առեղծվածն այդ էր։ Ռամիկ, ստոր, ճնշված դասին պատկանելու հետեանքով էր, որ այդպես անպատկառ վարվեցին բանաստեղծի հետ, բառիս բուն իմաստով վոնդեցին նրան արքունիքից ոչ միայն բացատրություն չտալով, այլև ծաղր ու ծանակի առարկա դարձնելով նրան։

Այս վիճակում և հոգեվիճակումն էր Սայաթ-Նովան, որ վերջ տվեց իր գեղումներին թագավորի հասցեին ու նրա վրդովված բերնից դուրս թռավ հոչակավոր «Ձեռը վի կալ...» խաղը, որ նա ոչ միայն վերստին վերականգնեց իր արժանապատվությունը, այլև ուամիկի ինքնասիրությունը ելակետ դարձնելով, շանթ ու կայծակ նետեց ամբողջ վերնախավի վրա՝ վերջին պալատականից սկսած մինչև թագավորը։

26 Նույն տեղում, «Իմ խիզճ գրուխ...», էջ 129 (վ)։

27 Նույն տեղում, «Ձեռը վի կալ...», էջ 128 (վ)։

28 Նույն տեղում, «Ով հարեմին...», էջ 129 (վ)։

29 Նույն տեղում, էջ 127 (վ)։

Անվախ դիմելով թագավորին, Սայաթ-Նովան ասում է.

Ձեռք վի կալ, վաղ մարերսին չիմ ուզում.
Էս աշխարհում փառամուրին չիմ ուզում.
Վաղ բան ուսիլ, յա վաղուրին չիմ ուզում.
Յիս մարդ մարք իմ՝ նամարդուրին չիմ ուզում...
Յիս ուամիկ իմ՝ բավադուրին չիմ ուզում...

«Յիս ուամիկ իմ՝ թավադուրին չիմ ուզում» հռչակավոր խոսքի մեջ է Սայաթ-Նովայի սոցիալական փիլիսոփայությունը: Եթե վերջին այս տողին նախորդող տողերը ուղղորդված կարգանք, կտեսնենք, որ ուամիկն է նա վերագրում ամենարարձը, սարդ մարք լինելու հատկությունը, իսկ թավադին բաժին տալիս սոսկ նամարդուրինը՝ իր բոլոր պարագաներով հանդերձ՝ վատ խոսքից մինչև ընդաքաղցությունը: Իրա համար է հենց, որ հասարակ այս մարդը վճռականորեն սահմանադատում է իրեն վերնախավից և արհամարհանքով նայում նրան արդեն ոչ թե ցածից վեր, այլ, ընդհակառակն, իր բարոյական վերից՝ ցած:

Այս խոսքից հետո, որ տառապած ուամիկի աղնիվ մի ճիշ է, մի բողոք ընդդեմ անարդար կարգերի, Սայաթ-Նովան իր հաշիվն է տեսնում նաև թագավորի հետ: Ճիշտ է, թագավորի նկատմամբ դեռ որոշ պատրանքներ մնում են նրա մոտ, նա դեռ շարունակում է ասել, որ ինքը նրա ոտի տակի խուղն է. որ

Բաղրս բաղիա կից ու միատիղ լլի՝
Առանձրն պատ՝ բաժանուրին չիմ ուզում.

սակայն քննադատական ոգին արդեն բուն էր գրել Սայաթ-Նովայի հոգում, այլ երգերում նա կասկածանքի տակ էր առել արդեն թագավորի արդարամտությունը («արթար դատե, չէ՞ վուր թագավուր իս դուն»), «հալբաթ դարդ ու ցավի մի ախպուր իս դուն»), իսկ հիմա, հակադրվելով մեջբերած երկուտղին, իր խաղը նա վերջացնում է հետևյալ երկուտղով.

Էկ, մի գրնա գրլուխտ կախ, Սայաթ-Նովա,
Աղ ու հացիա ախպերութին չիմ ուզում...

Ինչպես առաջին տան մեջ նա ասում է՝ բավադուրին չիմ ուզում, այնպես էլ վերջին տան մեջ, ընդլայնելով իր միտքն ու վերաբերմունքը, նա ասում է՝ ախպերութին չիմ ուզում՝ արդեն թագավորի հետ, դրանով հավասարեցնելով թագավորին թավադին, որպես առաջին, ամենամեծ թավադ: Այդպիսով, Սայաթ-Նովան սահմանադատում է ամբողջ վերնախավից, արհամարհանքով երևա դարձնում նրանից ու մի փոքր վարանումից հետո խրախուսում իրեն չընկճվելու, գլուխը բարձր պահելու, հպարտ լինելու իր հասարակ ծաղումով, իր աստվածային շնորհքով:

* * *

«Արթար դատե...» և «Ձեռք վի կալ...» խաղերը Սայաթ-Նովան գրել է ու իր հարաբերությունները խզել թագավորի հետ հավանորեն 1758—1759 թվականներին: Այդ տարիներին են գրված նաև «Ամեն սագի մեշըն դոված...», «Արի համով դուլուղ արա...», «Աշխարհս՝ մե փանջարա է...»³⁰ և մի շարք այլ նույն-

³⁰ Նույն տեղում, էջ 5 (հ), էջ 53 (հ), էջ 70 (հ):

նատիպ խաղեր: Այդպիսով, 1750-ական թվականների վերջը Սայաթ-Նովայի իրականությունից դժգոհելու և դրա հետ սերտ կապված ու մասամբ դրանով պայմանավորված ինքնաճանաչման, ինքնադիտակցման տարիներ են, ներքին, վաղուց սկսված համառ պայքարի, հակասությունների սուր բացահայտման, աշխարհի հետ ունեցած կոնֆլիկտի խորացման տարիներ:

Սայաթ-Նովայի ըմբոստացումը թագավորի դեմ պատահական երևույթ չէ: Դժվար չէ դիտել, որ բանաստեղծն առհասարակ հակադրվում է իր դարաշրջանին, դիմագրավում նրան: Թագավորի դեմ ապստամբվելը ֆեոդալական կարգերի հակադրման սոսկ բարձրակետն է հանդիսանում:

Սայաթ-Նովան ատում էր ամեն մի կաշկանդում, նա ուներ աշխարհի չափ լայն հոգի, ներքին գեղեցկագույն աշխարհ: Նա գիտակցում էր իր հանձարը, իր հոգեկան անհուն հարստությունը, իր շռայլորեն սփռված լինելը, որով և սոցիալական սանդուղքների վրա ցածր տեղ գրավող այդ մարդը անվախ ծառայում ֆեոդալական աշխարհի դեմ: Նա բնդվեց տիրողների դեմ իր ամբողջ էությունով, իր երգով, իր գիտակցված վերարերմունքով, իր արհամարհանքով հանդեպ այդ տիրողների ներկայացուցիչները փոքրից սկսած մինչև ամենամեծը: Բանաստեղծը բարձր պահեց ռամիկի պատիվը, իր մեծ շնորհքը, հարուստ հոգին, սիրող սիրտն ի սպաս դրեց նրա երջանկությանը և շունչը փչեց թրշնամու սուրը սրտում, իր բարոյական-հասարակական պարտականության խոսքը բերանին:

Սայաթ-Նովան ոչ միայն սիրահար աշուղ էր, այլև անձնուրաց ասպետ: Նա ատում էր անհրապույր իրականությունը ու ոգորում շարի դեմ, հասարակ մարդու ըմբռնումների թարգման էր նա ու հոգու ազատության երգիչ: Նա քնարերգու էր, իր ստեղծագործական գիտակցության բովով նա անցկացրեց մարդուն իր ամբողջությամբ ու ստեղծեց արվեստի չքնաղ մի աշխարհ, որ շողշողում էր իր խաղերի լալ ու գոհարի կախարդական փայլով: Սայաթ-Նովան երգում էր հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն: Իր խոր հույզերը, հարուստ մտքերն ու ասացվածքները նա կարողանում էր հավասար ուժով արտահայտել այդ լեզուներով: Ստեղծագործական առաջայլով արդեն հաստատվում է երեք հարևան ժողովուրդների հոգեկան կյանքի միասնությունը ինչ-որ բարձր ոլորտներում, որով և Սայաթ-Նովան դառնում է եղբայրության մունետիկ: Սայաթ-Նովան պայծառ մի աստղ էր ֆեոդալական միջ աշխարհում, նոր մարդու և նոր կյանքի հաղթանակի կանխազգացում, գալիքի առհավատչյա:

ГУМАНИЗМ В ПЕСНЯХ САЯТ-НОВЫ

Х. С. САРКИСЯН

Засл. деятель науки

(Р е з ю м е)

Основатели саятнововедения Г. Ахвердян (первый издатель произведений Саят-Новы, 1852), Ов. Туманян и В. Брюсов рассматривали великого ашуга во всей его многогранной целостности — как человека и автора, певца любви и труженика. Они называли его врачевателем:

души человеческой, истинным другом людей и своего народа, — не только увеселителем на пиру, но и учителем, пророком.

В самом деле, достаточно беглого взгляда на творчество Саят-Новы, чтобы убедиться в том, что он не только великий лирик, но и великий мыслитель. Саят-Нова любил, жил, страдал, но и наблюдал, размышлял. Значительная часть его песен — раздумья о жизни, о ее превратностях, о тяжелой судьбе человека. Саят-Нова — во вражде с окружающим миром, в конфликте с господствующими воззрениями. Его эстетика своим острием направлена против тупых, злых людей, против власти имущих. Победа «тела» в его древней борьбе с «душой» — это победа над официальной идеологией. С неповторимой силой Саят-Нова воспел любовь и тем самым возвел человека на недостижимую высоту в те времена, когда человек был рабом, когда топтали его личность, убивали мечту.

Саят-Нова ненавидел гнет, неволю, произвол. Сознавая силу своего слова, поэт, стоявший на самом низу социальной лестницы, смело выступил против феодального мира.

Он восстал против окружающей действительности всей силой своего существа, своим презрением к хозяевам жизни от мелкого тавада до всесильного царя. Человек, — простой человек, раб, «холоп», — в центре его внимания. Саят-Нова благославляет его, с гордостью называя себя смердом простым. Верный до конца своей любви, он остался верным до конца и великой идее служения человеку, и его предсмертные слова: не отрешусь я от веры своей! — слова человека, над которым блеснул меч врага, — говорят об этом же. Саят-Нова — певец, но он и рыцарь, рыцарь без страха и упрека.

Саят-Нова пребывал в вечном противоборстве со злом. Воспевая свободу человеческой души, он пропустил через свое творческое сознание всего человека с его радостями и страданиями и создал немеркнущий мир поэтических образов, отливающих волшебными красками его песен.

Саят-Нова писал на армянском, грузинском и азербайджанском языках — писал с равной силой. Это не только знание языков своих соседей, не только знание их душевного уклада и быта. Эти народы, столь самобытные по своему национальному облику, в сокровенных извилинах своей духовной жизни тесно сомкнулись друг с другом. Глашатаем этого единения и подлинной, задушевной дружбы и был Саят-Нова.